

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան Ծրար 10

ԻԱՆԽԻ

Վեցամսեայ » 5

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան Ծրար 12

Վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու ք/ւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիմ :
2հրատարակուած գրութիւնը եւ յտն/ւր :

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN K. STEPAN

(BULGARIE)

VARNA

ՏԱՐԵԴԼԻՍՈՒՆ



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄԲ

Օ. . . կերեւի թէ գործը կաշգին էր որ
գլխարկը մէկ կողմ գրեւ ես :

— Ի՞նչ կըսես . . . մինչև հիմա մինակ
այնչափ բան կըցայ մէկ կողմ դնել :

1898

1897 տարին լրացաւ : Իբրեւ պար-
բերական շարաթաթերթ չենք ուզեր
երկար տեսութիւններ պարզել մեր ան-
ցած տարիին զանազան շրջաններուն
վրայ, բան մը, որ կը թողունք աւելի
քաղաքական խնդիրներով զբաղող հայ
թերթերուն : միայն սաշտիւր պէտք կը
սեպենք ըսել որ անցած տարին ամուլ
շրջան մը եղաւ մեզ հայերու համար
թէ քաղաքական եւ թէ ազգային տե-
սակէտներով : Պատրիարքը կատարեալ
ամուլթեան դատապարտուած՝ ձեռն-
թափ եւ յուսահատ կը մնայ Բ. Գրան
խաբէրատիր քաղաքականութեան հան-
դէպ : Ուրախութեան կէտ մը կրնայ
սակայն համարուիլ մեր անթիկունք որ-
բութեան խնամքին համար ցոյց տրուած
ընդհանուր փութկոտութիւնը :

Գալով մեր ընտանեկան եւ բա-
րոյական կեանքին՝ զոր «Հայերի» այն-
քան ազգութեամբ եւ ուղղակի կը հա-
րուածէ, դարման տանելու համար բա-
րոյականի քայքայումներու եւ ընտանե-
կան բարքերու անկմանը, կարծենք ա-
ռիթ չենք ունենար շատ պարծենալու,
վասն զի ուրեք ուրեք տեսնուած ցա-
ւալի դէպքեր ընդհանրապէս թշուա-

ռութեան պատրուակին տակ ի յայտ եկած ,
կապացուցանեն թէ , մեր ընտանիքի տւան-
դական մաքուր շրջանակը չէ պահած իր ջինջ
պայծառութիւնը , զիճակ մը , որուն եթէ
անմիջական դարման մը չի տարուի , ահեղ
եւքի մը յանգեցու գատապարտուած է :

Կը մաղթենք որ 98 տարին զերծ մնայ
բոլոր այս ցաւալի պարագաներէն , որուն հա-
մար մեր ջերմ մաղթանքը և շնորհաւորու-
թիւնը կը յայտնենք ամբողջ ձգգին :

ՄԱՂԹԱՆՔ ԲՈԺՈՒԿԵԱՆ

Աւասիկ Տիար , հին տարին՝ տարի՛ ,

Ու անոր տեղը բերի Նոր Տարի .

Ի սրտէ մաղթեմ որ այս նոր տարի՛
քեզ համար ըլլայ յաջող ու բարի :

Բայց թէ որ ելնէ սիրտդ այս տարի
խենդ բաներ ուզէ ու սիրահարի ,

Ու փորձանք պակաս չըլլայ քու գլխէդ՝

Յանցանքը իմա չէ՛ եւ ոչ մէկ տաքի :

Թէ դուն զքեզ տաս այս տարի խաղի ,

Թուղթի , Պիլեաի , Թաւլուի դարի ,

Ու անցնի տարիդ դեռ դուն չիմացած՝

Կը հասնի փեսայդ հարիւր հազարի :

Թէ գինին , օղին , գօնեաքն այս տարի ,

Խմես անխնայ , պէս դեղի ճարի ,

Կուռեմաս յանկարծ , լեզուդ բռնելի ,

Ու երազներուդ վարկը կը դադրի :

Թէ չի հաշուես շահդ ու ծախքդ այս տարի ,

Ու տարեգլխուն չի գայ ծայր ծարի ,

Առնելիք չունիս ու պարտք ունենաս՝

Յանցանքն իմա չէ և ոչ մէկ տարի :

Իմ մաղթանքներս են , Տիար , այս տարի ,

Որ ըլլաս բարի և տէր հանճարի .

Աստուած չի ցուցնէ սր դու ալ ես ալ

Դէմէ դէմ ելնենք նորէն այս տարի՛

ԿՈՒՐԻ , ԿՈՒԼԻ , ԽՈՒԼԻ :

ԲՈԺՈՒԿԻ

Արիս քրիստոնէ հասցէին կարեւոր նա-
մակ մը եկած է մեր խմբագրատունը , յիշ-
եալ անձը թող գայ զայն առնել :



ԱԶԳԱՅԻՆ

—0—

Կաթ . այցելու հովիւ Գեր . Տ . Ըրսէն
Ծ . Վ . Վեհունի՛ Ամանորի առթիւ շնոր-
հաւորական հեռագիր մը ուղղած է առ Ն .
Ա . Բարձրութիւն . Ֆերտինանտ Ա . Իշխանն
Պուլկարիոյ , եւ յանուն Պուլկարաբնակ հա-
մայն ազգայնոց ջերմագին բարեմաղթու-
թիւններ ընելով՝ դուռատած է Իշխանին
կառավարութեան այն քրիստոնէավարել եւ
մարդասիրական վարմունքը , որով հիւրասի-
րուած են սոյն երկրին մէջ հաղարաւոր
Հայ գաղթականներ :

Սօֆիաի տէր Կարապետ Նախկին քա-
հանան , որ այժմ՝ Վատնա կը գտնուի և որ
կաթողիկոսութիւնն ընդունած է , տակաւին կը
կրէ հայ եկեղեցականութեան սքեմը . ուստի
կառավարիկներ իրեն որ այդ սքեմէն այլ եւս
հրաժարի , ըստ որում արժանի չէ՛ զայն
կրելու :

Տեղւոյս ազգային նորակերտ վարժա-
րանը դեռ չի բացուեցաւ , գոնէ այս մտօք
ազդ մը չտեսնուեցաւ լրագրաց մէջ : Նիւ-
թական շէնքին աւարտումէն ետքը արդեօք
բարոյական շէնքը այսպէս խարխուլ պիտի
մնայ : Տնօրէնի մը ընտրութիւնը կարօտ չէ
այսքան ձգձգութենքու , իսկ եթէ ուրիշ ղո-
րաւոր պատճառներ կան դպրոցին արդի վի-
ճակին յարատեւութեանը , որ մեզ անծանօթ
եղած ըլլայ , արդեօք ադոր դարմանը շատ
դժար է գտնել :

Վերջապէս , մեր գիտցածը սա որ վար-
ժարանին բացումը ուշացած է :

Ցաւօք սրտի կը ծանուցանենք թէ՛ Ա-
մանորի Ա . օրը մեր գաղթական եղբայրնե-
րէն շատեր՝ տեղական սովորութեան մը հե-
տեւելով՝ իրենց քսակներու վտիտ պարու-
նակութիւնը սրճարաններու մէջ կանգնուած
խաղի սեղանին վրայ բոլորովին կորսնցուցեր

ու նոյն օրուան ուրախութիւնն իրենց ձեռքովը տրտմութեան փոխեր են : Աւելի ցաւալին կայ . ասոնց մէջ գտնուելը են անակներ , որ ըրած կորուստներէն զգացած բարկութիւննին գացեր ընտանիքներէն աւեր են , ամենաոջինչ պատճառաւ մը անոնց հետ կռուելով եւ ուտելիք հացերնին քիթէ բերնէ բերելով :

Ո՛վ մարդեր , ո՛վ բարբեր :

Կիմացնեն մեղի թէ , Պուլկարիոյ Հայաշատ քաղաքներէ մէկուն մէջ Բ. անունով անտիպում բժիշկ մը , ի ծնէ անպէս կաթոլիկ մը եւ կըր բողոքական մը նստած ելած տեղերնին Մայր—Աթոռը եւ անոր Գահակը կը քննդատեն եղեր : Մեր հայ Լուստուրչական եղբայրներուն խորհուրդ կուտանք որ չի հանդուրժեն մեր Ս. Եկեղեցւոյ արժանաւոր մշակները կարգ մը օտարազան բախլախնդիրներու կողմէ անգուռ բերնով նախատուելուն :

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՅԵԱՆ

97 Դեկտ . 31 վառնա

Մեծ . Տիար Խմբագիր .

Քաղցր է ինձ յուսալ որ Ձեր ազգագուտ թերթի մէջ տեղ մը կը շնորհէք ներկայիս հրատարակմանը :

Նոյ . 24էն սկսեալ մինչեւ դեկտ . 28 , իմ մօտ ՚ի նպաստ գաղթականների հաւաքուած դրամին ամբողջ գումարը (որ է 65 Փր . արծաթ եւ 2 ու կէս Փրանս . ոսկի ու մէկ քառթ տաճկ . ոսկի) ամբողջովին յանձնած եմ Պատ . Աղբատանամին վարչութեան , նոր տարւոյ եւ Ս . Ծննդեան աւթիւ հիւանդանոցին մէջ ու դուրսը գտնուող տարագիր ազգայնոց ամենաշքաւոր մասին ուտեստ բաշխելու համար :

Այս աւթիւ հրատարակաւ շնորհակալեքս կը յայտնեմ այն բարեւէր ազգայնոց , որոնք չինայեցին իրենց լուծան սոյն մարդասիրական ձեռնարկին , եւ կը մաղթեմ որ իրենց այդ նուէրի փոխարէն՝ Նախախնամու-

թեան անսպառ գանձէն հարկւրապատիկ եւ բիւրապատիկ վարձք ստանան :

Մնամ աղօթարար ազգիս

Կաթ . այցելու հովիւ Հայոց Պուլկարիոյ

ԱՐՍԷՆ Վ . Ե . ՎԵՀՈՒՆԻ

Ցանկ Նուիրատուաց

Տիարք . — Կարապետ Յակոբեան 2 Փր : Գ . Ծ . բարեսիրտ տիկին մը 10 Փր : Նոյն տիկնոջ ձեռամբ 2 Փր : Տիկին Բերրոն . Բարամանեան կէսնաբոյէոն : Հանգուցեալ գաղթական Յ . Ո . Կի հոգւոյն 20 Փր : Յ . Գ . բարեսիրտ անձ մը 20 Փր : Ն . Ս . տիկին մը 1 քառք տաճկ . ոսկի : Հացագործ Աբրահամ տիկին Գ . Ծ . ի միջոցաւ 2 Փր : Մ . Պ 2 Փր : Մ . Մ . 5 Փր : Թ . Մ . Կ . Պոլսէն 2 . Փրանս . ոսկի եւ 2 Փր :

Գումար 65 Փր արծաթ , 2 ու կէս Փրանս . ոսկի . եւ 1 քառք տաճկ . ոսկի , որ կընէ 122 Փր . 70 սանդիմ :

Կը շնորհաւորենք Փ . Պալեցիները , որ համերաշխութեամբ ընարած են թէ տեղացի եւ թէ գաղթական 30 ազգայիններէ բաղկացեալ գերագոյն մարմին մը , սրուն պաշտօնը պիտի ըլլայ հսկել թաղ . խորհրդոյ եւ Հոգաբարձութեան գործունէութեանը վրայ :

Ահաւասիկ նոյն ժողովոյ անդամոց անունները .

Տիարք . — Առաքել Գաղաղեան : Գաբրիէլ Թօգաթլեան . Գառնիկ Գալաֆեան . Գասպար Նէմցէ . Գեորգ Աստարճեան . Գէորգ Թէվէքէլեան . Գրիգոր Թամիրեանց . Երուանդ Քիւրտեան . Թազուր Բանթի , եան . Թազուր Գ . Հինտլեան . Թազուր Ս . Հինտլեան . Խաչիկ Թազուրեան . Խաչիկ Կտիքոֆ . Կարապետ . Հարենց . Մ . Կարապետ Սիրեմճեան . Մանուկ Թովմասեան . Մարտիկ Գարակէօղեան . Միհրան Շամառնճեան . Միհրան Պասմաճեան . Միհրան Տամատեան . Մկրտիչ Թովմասեան . Մկրտիչ Մինասեան : Յակոբ Պ . Աղամեան . Յովհ . Արամեան . Յովհ . Գ . Մեսրոպովիչ . Մ . Յովսէփ Ալեան . Պետրոս Աստարճեան . Տօք . Սարգիս Ֆինճանճեան . Տօք . Սիմոն Գուլմճեան . Տիգրան Իսմեան :

Տե՛ս երես 310 , բոժոժիկի կողմէ զրկուած Կաղանդէքներուն ցանկը :

ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԵՐՏ Ի Կ ՊԼՈՒՍ)

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Սիրոյ աշխարհի մէջ առաջին անգամ սիրտը բարտխող երիտասարդի մը պէս, մեր Աստիւր աղան ալ նշանուելէն ետքը ինչ ընելիքը չգիտէր. միշտ իր նշանածին երեւակայութեամբը տոգորուած, չէր կրնար տեղ մը հանգիստ նստիլ. շղթաներով կը բաշէր այն կիրակին, յորում առաջին այցելութիւնը պիտի տար իր խօսեցեալին: Չի մոռնանք ըսել որ, մատանիներու գնումէն օր մը ետքը 4 ոսկի տալով ձեռք մը պատրաստ հագուստ առեր էր, որով ինքզինքը ալ երիտասարդի տեղ գնելով, «Հըմայեկս թա՛մ ճօվինս մի էղանք» ըսեր էր:



Վերջապէս բաղձացեալ կիրակին եկաւ, օր երջանկութեան Աստիւր աղաի, որ նոյն առտուն կանուխ արթնցած ու գիշերազգեստով բազմոցին անկիւնը նըստած, մէկ ձեռքը հայե-

լի և միւսը մասիկ (ձրկարգ) մը, պիտւորուն մէջ երեցող մէկ բանի ճերմակ մազերը կը բաշէր կը հանէր, քթին տակէն՝ «Իքեղ տէր յիւսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան» ալելուքը երգելով: Բայց յանկարծ սոյն աղօթքը ձգելով սկսաւ բարձրաձայն կանչել հետեւեալ երգը, որուն ձայնէն Գանիկ և Ղազիկ պառկած տեղերնուն արթնցած ու վեր-

մակը գլուխնին քաշած՝ քա՛հ, քա՛հ կը խընգային:

ԵՐԳ

Դիւն զիւլբարի տաշին եիս.
Կու գուտնուի գամ քովըդ,
Ո՞վ տեսայ նը մէյլ չըլնիր
Ու չուզիր գալ բու քովըդ:
Կիւլ, մէնէքչէ, եասէմին
Խալթ եին ըրիր բու քովըդ.
Պոյդ է սէվլի ֆիտանի,
Ընտո՞ր չեյլամ գամ քովըդ:
Նտգեր ու էտաներըդ
Կընիս աշկով քինթովըդ,
Հիչ էմիր մի չիս անիր
Ուր էլլեմ գամ բու քովըդ.

Նոյն միջոցին փողոցին դուռը զարնուելով Մաթոս աղան եկաւ յոգնած ու քրտնած, որ արշալոյսին՝ Պոլսոյ Չաթալ խանէն ճամբայ ելեր էր:

Աստիւր աղա ածապարեց ձեռքինները բազմոցին բարձին ետեւը նստել ու սիկառ շինելով զբաղելու:

— Բարի լոյս Աստիւր աղա, ըսաւ Մաթոս, քրտինքէն թրջուած գլխուն ֆէսը թաշկինակովը սրբելով:

— Բարին արեւդ Մաթոս պէկ. բաբօրո՞վ էկիր:

— Պէլի, խաֆաֆ բաբօրով:

— Խաֆաֆ բաբօրին ո՞րն է.

— Պօճախներս էֆէնտըմ, իքի մօմէրօլու:

— Հա՛, սանկ ըսէ, զէրէ աս վախթ բաբօրներուն հէրիֆները տա՛հա կու խուկան:

— Չր խուռկան պիլէ նը՝ նալլունի 40 փարան մեղքը չէ՞:

— Շիտտակ է. տապաւնակ ուխտով գալը թիճարէթլի է:

— Գիշերս բան մի զէյնս մէշղուլ տրաւ ու չի կրցի աշկունքս խրել:

— Խեր ըլլայ. ո՞ր խուռուսին հըմար է ըսածդ:

— Պինտ էսաջ, իմացուցի՞ր ուր Ղազի-

կը հետդ տի տանիս հարստիդ տիւնը :

— Խալիբ, ի՞նչ միւժիպով հետ տի տանինք մատեմ ուր հարսան ֆէօս տի բերինք :

— Հա՛, տիւն— փեսայ չի տի երթաս :

— Նէ՞ մինասիպէթ :

— Է՛յ, ասանկ խէյֆէի խուժիի խաբախին պէս պուզտիկ օտային մէջ տի նստիք :

— Ի՞նչ կըսիս աղա, խաբու խաբամա տիւն մի տի բռնիմ : Խաբառոյի մայնին թէսիմ բնեւնէս վէ Պատկեր աղաին վասը- թայովը Վարդապետի գէմու կիրակին մեր ճէմիյէթին իճրա ըլլալուն խապը ու խաբա- րը տալէս սըղրա՛ միւքէմմէլ տիւն մի տի բռնինք ու թէմճէմիլլէթը լեցնինք :

— Չըսի՞ս, 300 նիրայի դէօու մը տի բանաս :

— Ճիվերո՛ ՚ի վար, 500ը աշկըս ա- ռած ըլլալս մուխատտէմ իյֆատէ արինք բեդի. պախուսուս՝ աա խոււու չէշմէին մէջ թախըմ մի մեր հէմճէհրինեւրին ըրած չա- ըմնեւրին հախէն տի գամ, բարանին ջիւրերը տի վազցնիմ. հէլէ Անծօտենց Մեղիքոնին, փռենց Մանկըսարին ու Բաստեղենց Մալիմ աղաներուն թալը ու հարաքէթին խաթմէրլի մուխապէլէն տի անիմ :

— Բարով կըլլի. վէ էկէր գալիք տարի ալ ժամուն մէլլիւսին մէջ իշխան աղայի մանսուպ մի ձեռք ձգելու զատիր ըլլաս իսէ արթըխ կեանք իմ աղնաւորական :

— Ադ մանսուպը հայտէ հայտէ ձեռք տի ձգիմ, դիւն կորիկին (դրամ) զօրու- թինը դիտիս ա, անոր հիմէթսլը քօշէն առնողը կ'օլըրի :

— Ան չէ ըսմա, սահաթը քանի՞ուն Պոյաճի գեղ տի երթանք :

— Պատկեր աղան վութին բաբօրովը քէօրբիւէն հարաքէթ տի անէ ու Պոյաճի պեղի իսկէլէ պաշի խէյֆէն մեղի տի պէք- լէյէ :

— Անանկ է նը՝ տահա վախիթ շատ կայ, քէիյ մի դուրս էլլանք խէյֆէ մի եր-

թանք նուստինք :

— Բարով կըլլի, ըսաւ Աստիւր աղա, ու անմիջապէս հագուելով՝ Մաթոս աղային հետ գիւղին սրճարաններէն մէկը գացին նստան :

Տունէն մեկնած աստենին Աստիւր աղա խորխտածայն հետեւեալ հրամանը տուաւ Դանիկին :

— Մէնչո՛ւկ, Դանի՛կ, խասապէն կէս օխա միս, քէօշէի պախալէն ալ կէս օխա պըլլուր ա՛ն տէ փուռը տար Լիկիրմիլիկով մի էփեւ տիւր, Մաթոս աղան աս ցորեկ մեղի միսաֆիր է :

Ցորեկուան ժամը Յին այս երկու ըն- կերներ առն վերադարձան ու ճաշիւէ ետքը՝ Աստիւր աղան նոր առած հագուստները հագնելով՝ Պոյաճի գիւղ տանող ցամաքի ճամբան ձեռք առին, ու մէկ ժամէն հասան նոյն գիւղի ծովեզներայ մէկ սրճարանը :

Պատրիկ, թէեւ Տին շոգենաւով Պոյա- ճի գիւղ ելնել խոստացած էր, բայց ետքէն աւելի յարմար դատեր էր Տին շոգենաւով հօն հանելու, որպէ՛ս զի տանը մէջ պէտք եղած մէկ քանի կարգադրութիւնները ընէ : Ասոնք կատարելէ ետքը ժամը Տին սրճարան գնաց ու երկու Ակնցիները գտնեալ տանց ընկերակցութեամբը Միհրան աղային տանը վերադարձաւ :

(Շար)

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ՅԻՄԱՐՈՒԹԵԱՆՑ

(Շար. եւ վերջ)

— Երբ կը տեսնես օրիորդ մը կամ տիկին մը, որուն խօսակցութիւնը միշտ նո- րաձեւութեան սնտաի պաճուճանաց վրայ կը կայանայ, հեռացիր անկէ, վասն զի թեթեամատութեան ախտէն բռնուած է :


— Մէկու մը հետ ճանքան գացած ժամանակդ երբ քովինդ կը սկսի թեւեղ բըռ- նելով և քեզի կայնեցնելով բան մը պատմել

և այսպէս երկու քայլին մէկը բեղի ձանձրութիւն եւ արգելք լլլալ, հասկցիր որ այդ ընկերդ խենդ է:

— Երբ որ մէկն, իրեն որպիսութիւնը հարցնելու ըլլաս եւ միշտ տկար եմ. կը մեռնիմ կոր կըսէ, անպատճառ գըլխու հիւանդութիւն ունի:

— Առանց պատճառի մը շատ ինդոցողները, շատ լացողները, շատ խօսողները, շատ լուռ կեցողները, շատ ուտողները, շատ անօթի մնացողները, շատ շուտ քաղողները, հիւանդ չըլլալով շատ կամաց քայլ առնողները, շուտ շուտ կարծիք փոխողները, սխալնին գիտնալով ամենեւին կարծիք չփոխողները, շատ նորաձեւութիւն սիրողները, թաշկինակնին ծոցերնէն մինչեւ կէսը դուրս ձգողները, երիտասարդաց մէջ տէգօլթէ շապիկ հագնողները, շատ արբեցողները, միով բանիւ խենդ, պակաս, ապուշ, մօրող, եւ ուղեղնին թեթեալանութեամբ լցեալ են և կը մնան մինչև ի կատարած աշխարհի:

Պ. Յ.



ԿԱՂԱՆԴԵՔ

Հարկ կը համարինք Բոժոժիկի կողմէ մեր պաշտօնակիցներուն նուիրուած Կաղանդ-չէքներուն ցանկը հրատարակել աստանոր:

Արմենիան — Օժանդակ գանձանակ մը:

Հնչակին — «Աւաղ փառացս անցաւորի»:

Իրոշակին — Շարաֆ պէյին ուրուականը և 500 տուղինա բռնածէններ. իր առաւ—փախաւ գործակալներուն:

Մարտին — 24 այսր ոսկի եւրտըղլը Մեղայագիր մը:

Լառւ. Նիին — Սօպա թէփէսիի ֆըռըլտախ մը, իր փոփոխական գաղափարները դիւրացնելու համար:

Մշակին — Հայհոյութեան մասնագէտ խաւախոխ թղթակիցներ:

Արձագանքին — Գոմէշի մը կաշի, խամախոխներու խածուածքին դիմանալու համար:

Նոր—Վարին — Թերթը քշուելու համար լուծողական գեղ մը:

Աղբիւրին — Քիչ մը առողջաշար ջուր:

Արաքսին — Քանի մը հուժկու Հեւալօրաճիւներ, որպէս զի քաշեն հրապարակ բերեն զայն:

Մուրճին — Խմբագրի սալ գլուխին մի քանի մուրճի լաւ հարուած, որպէս զի սթափի:

Տարապին — Երկաթէ մի գաղափար, որպէս զի սնունէն խաբուելով տարազի պէտ միշտ իր ուղղութիւնը չի փոխէ:

Արարատին — Քիչ մը Վերջակետ, շարունակելի եղկայն յօդուածները կարճ բռնելու համար:

Իրաւունքին — Ռէնտքէնի Ճառագայթներու նորագիտ գործիք մը, որպէս զի իրաւը անիրաւէն զանազանէ:

Տաւրոսին — Հայհոյութեան բառարան մը:

Խուզակին — Լայլաճի թապախէն բաժին մը:

Հանդէս Ամսօրեային — Մագնիս մը, քիչ մը աղգային եռանդ իրեն քաշելու համար:

Բաղմովէպին — Հազար եւ մէկ զիշերներու պատմութիւն մը:

Հայքին — Ուղեգաչափ մը, հայութեան ապագան գուշակելու համար:

Եփրատին — Ցախաւել մը, սխալները աւելելու համար:

Փարոսին — Պզտիկ լապտեր մը, որպէս զի ցորեկը երթալու ատեն չիյնայ:

Մասիսին — Արդուկ մը, սուլթան Մուսաաֆաէն մնացած վրայի փոթիւրը շտկելու համար:

Բիւզանդիոնին — Երկաթէ կզակ մը, սեին ճերմակ կամ ճերմակին սե ըլլալը փաստաբանելու համար:

Արև Մամուլին — Նոր Աղեքսանդր Տիմա մը, իր վիպասանական ճիւղին մէջ բառեր գտնելու համար:

Փունջին — Մսավաճառի սպունք մը, երեսը սրբելու համար:

Լոյսին — Կալոն մը օղի, խմբագիր, վահան վարդապետին համար:

Մանգումէին — Էսէֆէնկիզ և հիւշիւ պատապառ չալըներէ կապուած գունջ մը:

Ճէրիտէի շարգիլէի — «Իքի տինտէն ալարա»ի պատմութիւն մը:

Մէժմուաի ախպարին — Կենդանա՝ նալու համար նոր վարդան բաշա մը:

Պատկերին — Ինքզինքը տեսնելու համար խոշորացոյց մը:

Հայելիին — Քիչ մը բաժանորդ, որ պէսզի աւելի ճոխ բովանդակութեամբ ներկայացնէ մեր ապակա՛ւած բարձրերը:



Գուզում Սիւմա հանրմ, սա խոշոր կէկ անուշապուրիդ թէնճիրէն քիչ մը մեղի տայիր:

— Քուրուկ եր'ու օր է թէնճիրէս ձեռքս չէ. Պիատոս հանրմենք ուզեր է՝ ին՝ անոնց զր'իցի, անոնցմէ ալ թար-

թիպ սուտունք ուզեր են, ետքը անոնք ալ Փառանձեմ հանրմենց առեր են:

— Չըսե՛ս, Վառնայի մէջ անդառտան կը պտտի կոր թէնճիրէդ:

— Ասով երկու կաղանդ է քի անանկ կըլլայ կոր:

— Առնողները պարէ մէյմէկ թապախ անուշապուր կը շրկե՛ն կոր:

— Նէ՞ մինասիպէթ, ես ալ միտքս դրի թէնճիրէն ձեռքս գալուն պէս պիտի ծախեմ:

— Էյ մեղքը չէ՞:

— Ի՞նչ ընեմ, ինձի ֆայտա մը չունենալէն ետքը սիրտ հատնումս ալ քովս քեար կը մնայ կոր:

Ու կաղանդին առտուն Սիւմա հանրմը թէնճիրէն 17 զրչի կը ծախէր վողոցները «Գալայչի», բազըրչիս» պուռացող մարդուն:

Բոժ. — Խենդը պոյնուզ չունենար:

Մէկ եր'ու զաւակաց հայր, գաղթական պարոն մը, լիօն անուն, որ արդուզարդի վերաբերեալ բաներ կը վաճառէ, խանութը գիմող յաճախորդ օրիորդներուն դէմքին շատ կը մօտեցնէ եղեր իր անպատկառ շրթունքները ու խեղճերը յանկալծովիի կը բերէ եղեր:

Այս մասին մանրմասն տեղեկագիր մը բերելու պաշտօնը բոժոժիկին յանձնուած է:



ՃԱՀԱՐԱՆ ԱՐԱԳԱԾ

Սոյն ճաշարանը այս անգամ Տիար Գէորգ Փափազեանի տնօրէնութեանը յանձնուած է, ուր ըստ առաջնոյն կը գտնուին համագամ կերակուրներ: Պատուարժան յաճախորդք խիստ գոհ պիտի մնան թէ կերակուրներէն և թէ գիներու անմրցելի աժանութենէն:

ԿԱՐԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Եւ

ՅԱԿՈԲ ՄՈՍԿՈՑԵԱՆ

Փորագրիչք

Ուրիցա Բառուչէվա, Թիւ 1339

Վառնա

Նրբաճաշակ փորագրութիւններ թէ տոսախի եւ թէ մետաղի վրայ, գոթիկ գրերով ամեն լեզուէ այցաքարաւոր, աստնցմէ զատ անձնական եւ վաճառականական կնիքներ կը պատրաստեն: Յաճախորդք միշտ գոհ կը մնան փորագրութեանց մաքրութենէն եւ գիններու չափաւորութենէն: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

ԿՈՒՍԱՆԿԱՐԻՉ

Ի սրբէն Արդան



4րդ Թաղ, Թիւ 218

Գործիք կատարելագործեալ Գին չափաւոր:

Отговоренъ редакторъ: Н. Драгулевъ

Печатница „Взаимность“—Варна.

Տ Պ Ո Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Այցեատման, Հայեցեատման, նամակագրութեան, հրապարակման, բարենիչ, ամսոսակ, հայլի եւ այլն թէ՛ պարզ եւ թէ՛ ոսկեղօծեալ մէկ քանի գոյններով կը տրուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին զոհարարիչ: Դիմել Հայեցի իւրմաքրութեան:

Վարդկենական Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի եւ նոր տոմարին մէջ կը գտնուի Այցեատմանի գործածութեան հրահանգը պարունակող տետրակ մը, որուն կողքին վրայ այցեատմանի տիրուէն տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանգիմը յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանգիմնոց նամակագրոշմ՝ կ'ընդունուի: Կանխիկ:

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

եւ Ձուրարան

(ՊՈԽԼԿԱՐԻՍ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ Ե Բ. Է. ԲԱՆՁՈՒՓ

Վառնա Երզ թաղ Ելաղ Թապիա

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն եւ նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով եւ թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շոգեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթայ գործիքներ, զրամական գատաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ եւ այլն եւ այլն կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են այն գործարանի շինութիւններէն: